Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

Էլ. - ՀՓ 656-2026
«03» մարտ 2026թ.
ք. Երևան

#քոմարդիկամենուր

«ԴՈՌՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԼԵՎՈՆ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք.Երևան, Նիկոլ Դուման 50 ա
Հեռախոս՝ (+374) 41442224
Էլ.հասցե՝ artyom.hcp@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2025 թվականի նոյեմբերի 25-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոռմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար կանացի վերնաշապիկների ձեռքբերման թիվ «**ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/85**»-1 ծածկագրով գնման պայմանագրի՝ (այսուհետ՝ Պայմանագիր) Կատարողը պարտավորվել է մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

Պատվիրատուի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի պահանջները, մասնավորապես՝ Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը չի իրականացվել Պայմանագրի N 2 հավելվածով (մատակարարման ժամանակացույց) սահմանված ապրանքի մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

«Հայփոստ» ՓԲԸ
ՀՀ, 0061, Երևան, Արշակունյաց 65/5
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսքիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.5-րդ և 2.1.7 կետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 Հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի 8.11 կետով սահմանված է, որ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի որակավորման ապահովման գումարը անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **«1930003703150100»** հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք **N «ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-25/85»-1** ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվի Պատվիրատուի կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**